# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՍՏԱՐՄԱԼԵ ՍՊԸ-ն ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/29 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | ՍՏԱՐՄԱԼԵ ՍՊԸ | Ուղղահայաց շերտավարագույրները նախատեսված են ներքին տարածքներում արևային ճառագայթման կարգավորման և տեսանելիության ապահովման համար: 1. Կառուցվածք և չափեր • Շերտավարագույրները բաղկացած են քիվից և ուղղահայաց դասավորված շերտերից: • Շերտերի լայնությունը՝ 85-95 մմ: • Շերտերը ներքևի հատվածում ապահոված են ծանրոցներով՝ կայունություն ապահովելու նպատակով: • Շերտերը փոխկապակցված են ներքևի միացնող շղթայով (առկայության դեպքում): 2. Կառավարման համակարգ • Կառավարումը իրականացվում է մեխանիկական եղանակով՝ օ շղթայի միջոցով՝ շերտերի մինչև 180° պտտման համար, օ թելի միջոցով՝ շերտերի կողային տեղաշարժման (բացման/փակման) համար: • Կառավարման համակարգը պետք է ապահովի սահուն, անխափան աշխատանք: 3. Նյութ և որակական պահանջներ • Շերտերը պատրաստված են բարձրորակ տեքստիլ կամ համարժեք նյութից: • Նյութը պետք է լինի դիմացկուն՝ արևային ճառագայթների, գունաթափման և մաշվածության նկատմամբ: • Շերտերը պետք է լինեն հարթ, առանց թեքումների, դեֆորմացիաների կամ արտադրական թերությունների: • Բոլոր մետաղական և պլաստիկ բաղադրիչները պետք է լինեն ամուր, հակակոռոզիոն և երկարաժամկետ շահագործման համար նախատեսված: 4. Գունային լուծում • Շերտավարագույրների գունային |

| | | |
|---|---|---|
| | | լուծումը ընտրվում և վերջնականապես հաստատվում է բացառապես պատվիրատուի կողմից: Հիմնականում դիտարկվելու են վառ գույների նմուշները, օրինակները տես նկարի մեջ: • Մատակարարը պարտավոր է ներկայացնել հնարավոր գունային տարբերակների նմուշներ (կամ կատալոգ)՝ ընտրության համար: 5. Կոմպլեկտացիա և մատակարարում Շերտավարագույրները մատակարարվում են ամբողջական հավաքով, ներառյալ՝ • քիվեր, • կառավարման մեխանիզմներ (շղթա, թել), • ամրացման հարմարանքներ (կրոնշտեյններ և այլ), • ծանրոցներ և միացնող տարրեր, • և բոլոր անհրաժեշտ այլ բաղադրիչներ: • Կախելու համար նախատեսված պրուրակներ և դյուբելներ, կառնիզի համար հաշվարկված քանակով: 6. Չափագրում և տեղադրում (եթե կիրառելի է) • Մատակարարը պարտավոր է կատարել տեղում չափագրում (պատվիրատուի պահանջի դեպքում): • Տեղադրումը պետք է իրականացվի որակյալ և ապահով՝ ապահովելով կայուն ամրացում և ճիշտ գործարկում: 7. Չափման միավոր և հաշվարկ • Գնումը կատարվում է քառակուսի մետրով (քմ): • Առաջարկվող գինը պետք է ներառի տվյալ մակերեսին համապատասխան բոլոր անհրաժեշտ նյութերը, բաղադրիչները և հարմարանքները: Նշում. Եթե պատվիրատուն պահանջում է, օրինակ, 10 քմ գիշեր-ցերեկ տեսակի գալարավարագույր, ապա տվյալ մակերեսին համարժեք ամբողջական համակարգը (բոլոր բաղադրիչներով) պետք է ամբողջությամբ ներառված լինի առաջարկվող գնի մեջ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ՍՏԱՐՄԱԼԵ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/29 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 1 | | |